Շրջակա միջավայրի նախարար
պարոն Հ. Սիմիդյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.**
   Նոնա Բուդոյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կլիմայական քաղաքականության վարչության պետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Այցելություն Բելգիայի Թագավորություն՝ 2023 թվականի նոյեմբերի 15-18-ը
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր Բելգիայի գրասենյակ
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի պաշտոնական փակման միջոցառմանը և ղեկավար կոմիտեի նիստին:
   Միջոցառման նպատակն էր ամփոփել ծրագրի հիմնական ձեռքբերումները և 2019-2023 թվականների ընթացքում քաղված դասերը:
   «ԵՄ կլիմայի համար» ծրագրի նպատակն էր օժանդակել Արևելյան գործընկերության 6 երկրին՝ (Հայաստանի Հանրապետություն, Ադրբեջանի Հանրապետություն, Բելառուսի Հանրապետություն, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա) իրականացնելու Փարիզյան համաձայնագրի ներքո իրենց հանձնառությունները և բարելավել կլիմայական քաղաքականությունը և օրենսդրությունը:
   Ծրագիրը մեկնարկել է 2019 թվականին, բյուջեն կազմում էր 8.8 միլիոն եվրո:
   Միջոցառմանը մասնակցում էին «ԵՄ-ն կլիմայի համար» ծրագրի թիմը, Եվրոպական հանձնաժողովի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, Էներգետիկ համայնքի ներկայացուցիչներ, միջազգային փորձագետներ, Արևելյան գործընկերության 5-երկրների՝ Հայաստանի, Վրաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի և Ադրբեջանի ՄԱԶԾ ներկայացուցիչները, լիազոր նախարարությունների ներկայացուցիչները:
6. **Քննարկված թեմաները (հարցերը).**
   - Արևելյան գործընկերության երկրներում կլիմայական հավակնությունների ընդլայնման հնարավորությունները,

- «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի արդյունքների ներկայացում. կլիմայական գործողությունների ռազմավարական պլանավորում,
- իրավական համապատասխանեցում/ներդաշնակեցում ԵՄ օրենսդրության հետ և կարողությունների բարձրացում,
- «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում կարողությունների զարգացմանն ուղղված գործողությունների ներկայացում,
- հետագա համագործակցության ընդլայնում:

«ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի պաշտոնական փակման միջոցառմանն անմիջապես հաջորդել է ծրագրի ղեկավար կոմիտեի նիստը, որի ընթացքում քննարկված հիմնական թեմաներն են.

- 2019-2023 թվականների ընթացքում ծրագրի արդյունքների ներկայացում,
- Ծրագրի ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում,
- 2019-2023 թվականների ընթացքում ծրագրի ներքո իրականացված միջոցառումների ներկայացում,
- Ծրագրի արդյունքների գնահատում,
- Արևելյան գործընկերության երկրների կողմից հետագա քայլերի նախանշում,
- Ղեկավար կոմիտեի որոշման ընդունում և նիստի ամփոփում:

7. **Հանդիպումները, ելույթները.**

Որպես ղեկավար կոմիտեի անդամ, հանդիպման ընթացքում հանդես եմ եկել Հայաստանի կլիմայական քաղաքականության շրջանակի, հիմնական ձեռքբերումների, ծրագրի իրականացման ժամանակահատվածի՝ 2019-2023 թվականների համար ոլորտի քաղված դասերի վերաբերյալ ներկայացումով: Նաև ներկայացրել վերոնշյալ տարածաշրջանային ծրագրի շրջանակներում մշակված ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարության նախագիծը: Ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների՝ իրենց փորձով կիսվել են Արևելյան գործընկերության երկրները (Հայաստանի Հանրապետություն, Ադրբեջանի Հանրապետություն, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա): Ներկայացվել են ծրագրի շրջանակներում իրականացված ազգային օրենսդրության իրավական կարգավորումները և դրանց ներդաշնակեցումը ԵՄ օրենսդրության հետ: Ելույթներում կարևորվեց տարածաշրջանային ծրագրի շրջանակներում կլիմայական օրակարգի ձևավորման և իրականացման իրավական և ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդման նպատակով համագործակցությունը և նախանշվեց «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի երկրորդ փուլի համար կարևոր առանձնահերթությունը, այն է՝ պլանավորումից իրականացումը:

8. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

**Տրածաշրջանային ծրագրի արդյունքներն են՝**

- ջերմոցային գազերի կադաստրերի գործընթացների բարելավումը
- նորացված ԱՍԳ-ների՝ կառավարությունների կողմից հաստատումը
- արտանետումների մոդելավորման և երկարաժամկետ պլանավորման փորձի ավելացումը
- շահագրգիռ կողմերի ներգրավվածության և տեղեկացվածության բարձրացումը
- մեղման և հարմարվողականության գործողությունների պլանների մշակումը բոլոր մակարդակներում (ազգային-քաղաքային)
- կլիմայական ֆինանսավորման գործիքների մասին տեղեկատվության տրամադրումը
- կլիմայական գործողությունների ինտեգրումը ոլորտներում
- գենդերային հավասարության վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Հանդիպման ընթացքում վերահաստատվեց տարածաշրջանային ծրագրի 2-րդ փուլը: Այն ուղղվելու է ընդունված փաստաթղթերի կյանքի կոչմանը՝ կարևորելով համայնքներում կլիմայական ծրագրերի իրականացումը, կարողությունների զարգացումը: Տարածաշրջանային ծրագրի երկրորդ փուլը իրականացվելու է Գերմանիայի միջազգային համագործակցության կազմակերպության կողմից:

*Գործուղվող* *Նոնա Բուդոյան* *22.12.2023*